



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ե. — ՇԻՋԱՆ ԻԱ. 1889 ՏԱՐԻ ԻՐ. ՄԱՅԻՍ 31

ԿՐՈՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ.

(Եփե. Ե. 15, 16):

Եթէ որ ուզում ես սրտի անխռով խաղալու թիւն գտնել այն օրերումիւ, երբ որ վիշապ քեզ շնոր է տխրեցնում, իմաստութիւնը Գեղ կասի դեղն ու գարմանն, իմաստութիւնն, որ Աստուծուն ամեն բանից աւելի սիրելի է: Սորվիր միայն համբերութեամբ տանել, ինչ որ Ստեղծողը քեզ քաշելու բաժին է տուել, ազնիւ սրտի ոյժն ու զօրութիւնն այնպէս է վարժուում ու կրթւում իւր անհանգիստ օրերում, որ կարող լինի



յաղթութիւն տանել, երբոր մի ժամանակ մարդուս մարմինը կթալկանայ ու կանշնչանայ:

Ամենասովորական գանգատներից մէկն, որ անում են մարդիկ, այն գանգատն է թէ՛ այժմ ժամանակները փոխուել են, վատացել են: Այսպիսի խօսքեր կարգում ենք մենք ամեն հրապարակական թերթերի մէջ, լսում ամեն փողոցներում, և ամեն տեղ, ուր որ քիչ՝ կամ շատ մարդիկ հաւաքուած են լինում մի տեղ:

Ձքնելով, թէ այս խիստ դատողութիւնն ամեն անգամ էլ մաքուր աղբիւրներիցն է արդեօք յառաջ գալիս. չհետազօտելով թէ՛ այն գանգատն, որ անում են, ամեն բանի մէջ էլ հիմնաւոր է արդեօք. շատ անգամ մենք էլ համակիր ու համաձայն ենք լինում, երբոր մեզ, կամ մի անպատեհութիւն, մի ձախողակութիւն է պատահում, կամ՝ երբ որ հարկադրուած ենք լինում մեր դրամական միջոցը չհերիքանալուն պատճառով՝ մեր ծախքը պակասեցնել ու չափաւորել. կամ երբոր մի վատ մարդ մեզ խաբած է լինում, կամ մի ուրիշը մեր բարեսրտութեան փոխարէն՝ մեր դէմ ստոր ապերախտութիւն է անում. կամ թէ՛ զգուշութեան պակասութիւնից՝ ինքներս մեզ վնաս ենք հասցնում:—Այն ժամանակ ախ ենք քաշում թէ՛ ժամանակս վատացել է, քանի գնում է, օր օրի վերայ աւելի վատանում է:

Այդպիսի գանգատներն անշուշտ մեծ ներգործութիւն ունին մեր սրտի գոհ ու հանգիստ լինելուն վրայ ու մեր անելու գործի կերպին վրայ: Պատճառ որ՝ ինչպէս որ սովորութիւն ունինք աշխարհիս վրայ դատողութիւն անելու, այնպէս էլ վարւում ենք աշխարհի հետ, և ինչ կարծիք որ ունինք մարդոց վրայ, նոյնը ցոյց ենք տալի մեր գործերովն էլ:

Բայց որովհետեւ աշխարհի կարծիքը, մարդիկն ու ժամանակի հանգամանքները շատ ու շատ անգամ մեր մտքի ու զգացմունքի կանոնն են մեր առաջը դնում՝ ամենեւին առանց ուշադրութեան թողնելու, կամ աննշան մի բան համարելու չէ քրիստոնէի, Փրկչի իմաստուն աշակերտի համար այն թէ, ար-

դեօք ինքն էլ ուղիղ է մտածում և ուղիղ դատում, թէ գուցէ՝ ընդհանուր տրամադրութեան տակ գտնուելով, կամ ուրիշ անախորժութիւնների պատճառով, որոնց հանդիպել է, մի սխալ ընթացք է բռնել իւր վարմունքի մէջ, — Ուրեմն ամեն մի մարդ թող ինքն իրան քննէ. թող մինակ մի կողմ քաշուի ու ինքն իրան մտածի թէ՝ ինչո՞ւ եմք շատ գանգատւում ժամանակների փոխուելու, վատանալու վրայ։ Արդեօք յիրաւի աւելի վատացել են, քան թէ առաջներն էին։ Արդեօք արդար է և անհերքելի մեր մտածմունքն, որ այժմեան աշխարհից տոգոհ պիտի լինինք։

Մարդոց գանգատները շատ տեսակ տեսակ պատճառներ ունին։ Կան մարդիկ, որ ակն են քաշում հասարակաց դիւրութիւնները, յարմարութիւնները շատ պակասելուն, շատ բան դժուարոնալուն վրայ, կամ թէ իրանց գործից աշխատանք, օգուտ շատ քիչ տեսնելուն վրայ, կամ թէ առուտուրը փչանալուն, մարդոց քանդուելուն վրայ աղետաբեր պատերազմներից. կամ թէ ինչ նեղութիւն, ինչ չարչարանք պէտք է քաշեն, որ իրանց ու իրանց ընտանեաց պատշաճաւոր կերպով պահել կարողանան։

Այդ տեղ հասակաւոր հին մարդկանցից լսուում են առաջուայ ժամանակի լաւ օրերի վրայ գովասանքի խօսքեր թէ՝ ինչպէս ամեն մի մարդ իւր ապրուստը հշտութիւնով էր ձեռք բերում ու հանգիստ ապրում. թէ ինչպէս կարելի էր էժան գնով առնել ոչ միայն կեանքի ամենահարկաւոր պիտոյքներն, այլ և շատ ուրիշ բան, ինչ որ պէտք էր կեանքի դիւրութիւն ունենալու, լաւ ուտել՝ խմելու և ուրախ օրեր տեսնելու համար։

Լսում են մարդիկ սարսափելի բաներ պատերազմների և նրանց ունեցած սոսկալի հետեւանքների մասին. լսում են թէ՝ ինչպէս ամբողջ քաղաքներ իրանց իրաւացի սեպհականութիւնից զրկուեցան, կողոպտուեցան ու անմարդաբնակ անապատ դարձան, լսում են թէ՝ ինչպէս շատ տեղ բնակիչներն՝ իբրեւ հպատակ՝ անտանելի ծանրութիւններից և իրանց վրայ դրած հարկերից ողորմելի վիճակի հասան և իրանք իրանց կորցրեցին,

ու թէ ինչպէս այս ամեն բանն ուրիշ ժամանակ այդպէս չէր:

Անշուշտ այս գանգաւանների շատը, դժբաղդաբար, շատ ճշմարիտ են միայն. բայց պէտք չէ, որ չափից դուրս մեծացնենք պատահած անբաղդու թիւներն: Իրաւունք չունինք հաստատ կերպով ասելու թէ՝ թշուառութիւնն, որ մի քանի տեղեր պատահեցաւ, ամեն տեղ էլ նոյնն էր, որ մեր լաւ անուանած ժամանակներն էլ երբէք չեն վերադառնալ, որ առաջ ամեն բան աւելի լաւ էր, քան թէ այժմ:

Ճշմարիտ է, շատ ընտանիք իրանց ունեցած առաջուան լաւ վիճակն կորցրին. բայց մենք հէնց ինքներս ակահատես վկայ ենք, որ ուրիշ շատերը առաջուան իրանց ունեցած վիճակից բարձրացան և շատ աւելի լաւ գրութեան հասան: Ճշմարիտ է, առաջուայ շատ արհեստներ, արտահանութիւններն ընկած ու փող աշխատելու ուրիշ շատ միջոցներն էլ չկան, որ առաջուան օգուտը բերեն. բայց չի էլ պէտք ուրանանք, որ ուրիշ միջոցներ կան, և թէ ուրիշ արտահանութիւններ առաջ գնացին և շատ աւելի լաւ վիճակի մէջ են: Այս փոփոխութիւնն, որ ընկաւ բանուկ գործերի մէջ, որ առաջ լաւ վիճակի մէջ էին, յետոյ վատ դրութեան հասան՝ առաջ էլ եղել է ու միշտ էլ պէտք է լինի: Արժեք որ վնասուել են ու կորուստ ունեցել, մեղքն իրանցը լինելով՝ կամ չլինելով, լաց են լինում. բայց ուրիշներն, որ օգուտ են ունեցել, շահ են տեսել, ուրախանում են:

Սուտ չէ, որ ժամանակի հանգամանքներից մեզ համար անպատճառ հարկումը դարձած շատ պիտոյքներն աւելի թանկացել են. բայց այն էլ խոստովանենք, որ Աստուծոյ օրհնութիւնն ընդհանրապէս մեզ վրայ է. այն էլ խոստովանենք, որ մենք այն ամեն բանն, ինչ որ մեր կեանքի ամենակորեւոր պէտքերի համար անհրաժեշտ են՝ դեռ միշտ էլ ունենում ենք, կարօտ զուրկ չենք մնում. այն էլ պէտք է ջանաւանդ, որ չափաւոր կերպով սպրիլ չիմացոյն ու իւր ունեցած վիճակովը ոչ մի ժամանակ գոհ չեղօղն է միայն տոգոհ: Ամենիս խնամք տանող երկնաւոր մեր Հօր ողորմութեանը փառք՝ ու կարօտ մարդոց խղճացող բարերարներին շնորհակալութիւն, որ մեր

մէջ դառն աղքատներն անգամ իրանց գլուխը ծածկելու տեղ ունին՝ իրանց համար պատրաստուած տների մէջ, ուր որ ընդունուած են, հագուստ ունին՝ մերկ չեն մնում, հաց ունին՝ քաղցած մեռնելու վտանգից ազատ են:

Սուտ չէ, մեր ժամանակի ցնցումներն առաջուայ տարիների շատ բարօրութիւնները մեր ձեռքից հանեցին, քանի քանի առաջուան ունեցած ու սովորական դարձած իրաւունքներից զրկեցին: Թագաւորական աթոռներ կործանուեցան, ուրիշ տէրութիւններ նորից բարձրացան, ամբողջ երկիրների արհեստների, աշխատանքի դուռը փակուեց, որքան տեղեր անապատ դարձան, մեր օրերումն էլ տեսնում ենք, որ պատերազմները, սպանութիւններն ու հրգեհները գեռ պատուհաս բերող իրանց գաւազանը բարձրացնում են երկիրների վրայ: Ըստ ինքեան անկարելի բան է, որ մարդիկ իրանց կրքերի ու ցանկութիւնների հանգիստ չմտալուց՝ մի մշտական խաղաղութիւն վայելել կարողանան. խաղաղութիւնը կամ խաղաղ ժամանակն անգամ մարդոց մարմնապաշտութիւնից, հեշտասիրութիւնից, յանձնապատասխանութիւնից՝ որպէս և մեղկութիւնից՝ էլի միշտ պատերազմ է առաջ բերում: Այս կողմից մեր ժամանակներն առաջուան օրերին նման են. մեր հայերն էլ մեղ նման քաշելու բաներ ունեցել են, առանց նեղութիւնների չեն անց կացրել իրանց կեանքը: Բայց մենք միայն մեր քաշածները լաւ գիտենք, միայն մեր զրկանքներն ու կրած նեղութիւններն ենք աւելի զգում, մինչդեռ այն չարիքն, որոնց մէջ ընկնելով մեր նախնիքն, իրանց օրերն ախ քաշելով են անց կացրել, հեռուումն եղող մի ստուերագծի նման է մեզ երեւում: Ուրեմն շատ էլ վատ չասենք մեր ժամանակին, որոյ մէջ ապրում ենք, ոչ էլ մեր պապերի աշխարհումն ապրած ժամանակը շատ բաղդաւոր համարենք:

Սուտ չէ, մեր օրերի շատ չարիքը մեզ ճնշում է. բայց աշխարհումն կայ արդեօք մի չարիք, որից երբէք ազատուիլ չկարողանանք: Եւ եթէ այն նեղութիւններն, որոնցից որ այսօր մենք գանգատում ենք, անց կենան. մեր յետագայ սերունդն իրանց՝ ժամանակին մեղանից արգեօք աւելի բաղդաւոր պիտի

լինին, Ա՛խ, ինքներս մեզ չխաբե՛նք: Նրանք խաղաղութեան գրգռման էլ՝ ուրիշ տեսակ քաշելու բաներ կուենան, որոնցից աշխատելու համար ամենայն ջանք և ոյժ պիտի բանեցնեն ու կուտեն իրանց օրերումը պատահած չարիքի ու նեղութիւնների հետ, որ յաղթել կարողանան, ուրեմն և ուրիշ ուրիշ պատճառներ պիտի ունենան իրանց նոր գանգատներն, որ պէտք է անեն: «Ամեն մի օր», ինչպէս ասում է Քրիստոս, «իւր չարիքն ունի» (Մատ. Զ. 34): մարդու անբաղդացնողն ո՛չ աշխարհս է և ո՛չ ժամանակն, մարդս ինքն է, որ աշխարհս անբաղդութիւնով լցնում է: Քրիստոնեան կարող է կեանքի ամենամեծ ու անսպասելի փոթորիկների միջոցին էլ իրան անվրդով պահել՝ առանց ընկճուելու: Գոհ մնալով Աստուածանից և այն վիճակից, որ վերին Տեսչութիւնն իւր համար սահմանել է. ամեն օր ջանք է անում որ և իցէ մի ուրախութիւն գտնել և հասարակաց գոբաղդութիւնն, իւր ձեռքից եկածի՝ չափ բարերար աշխատութիւնով ամփոքել:

Բայց աւելի հիմնաւոր են երևում ուրիշների գտնադատներն աշխարհիս վատանալուն վրայ. քանի որ գանգատուում են վարքի ու բարքի աւելի և աւելի փչանալուն վրայ և ամեն մոլութիւնների՝ հոսանքի պէս շատանալուն վրայ: Այդ տեսակ գանգատաւորները պախարակելով են խօսում պատանիների և երիտապարզների թեթեամտութեան վրայ, որ համեստութեան վրայ ծիծաղում են և օգտակար աշխատութիւնից իրանց հեռու են պահում. ցոյց են տալի շատ ընտանիքների արած ամենեւին չհաւանելու շուայլ ծախքն, ապագան և իրանց զաւակաց համար քաշելու հոգսն ամենեւին չմտածելով. ցոյց են տալի սովորութիւնների նրբանալն ու մոլութիւնների աւելանալը. ցոյց են տալի դատարկ եկեղեցիներն և ուտելու, խմելու, զուարճանալու և ոտոր վայելչութիւններ քաշելու տեղերն, որ կարող ենք ասել թէ՛՝ դատարկ չեն մնում, ինչու որ գրեթէ միշտ մարդիկ պակաս չեն՝ իրանց պարսաւելի ժամերն անց կացնելու համար: Ինչպէս այս, ու այն ծեր մարդը, սրտանց ցաւելով, յիշում է հին լաւ խաճախէն, որ շատ աւելի լաւ էր, քան թէ այժմ:

Միայն թէ այս գանգատներն էլ անարգար են դուրս գալիս, եթէ որ ներկայ ժամանակն ամբողջապէս դատապարտում են: Դեռ ևս հազարաւոր մարդիկ կան, որ իրանց Աստուծուն պաշտում են, դեռ ևս հազարաւորները կան, որ Քրիստոսին ոչ թէ միայն բերանով, այլ սրտով էլ խոստովանում են. հազարաւորներ կան, որ մոլութիւնն ասում են ու կատարելութեան հասնելու ամենայն աշխատութիւն են թափում, Դեռ ևս Աստուծոյ թագաւորութիւնն աշխարհիս վրայ կործանուած չէ. դեռ ևս Աստուծոյ խօսքը զօրաւոր է թէ՛ երեւելի և թէ՛ աննշան մարդոց սրտի վրայ. դեռ ևս Յիսուսի յաղթանակներն ոչնչացած չեն, և աստուածային յայտնութիւններն, որ հազարաւոր տարիներից ժառանգաբար եղած են մարդկային ազգին, յաւիտեանս կ'մնան:

Ճշմարիտ է, մարդս սխալական արարած է՝ և ամեն տեղ ու ամեն ժամանակ էլ մեղքի հակումն ունենալը վրան տեսնուում է: Բայց այդպէս էր մարդս աշխարհիս հէնց սկզբից: Արդէն Դաւիթ մարգարէն գանգատելով ասում է թէ՛ «Տէր, սուրբերը՝ քանի գնում են՝ քիչանում են»: Աշխարհիս հէնց սկզբիցը դժոխքն երկնքի հետ, չարը՝ բարւոյ հետ, զգայական հակումների գրգիռն ու դրդումը՝ բարւոյ գիտակցութեան հետ, միշտ իրար հակառակ են եղել, միշտ պատերազմել են իբրեւ անհաշտ թշնամիք: Մեր դարն ունի իրան՝ յատուկ մոլութիւնները՝ բայց և իրան՝ յատուկ առաքինութիւններն. ամեն մի դար էլ՝ մեզանից առաջ՝ իրան՝ յատուկ մոլութիւններն և առաքինութիւններն ունեցել է: Աշխարհիս ու մարդոց կեանքի պատմութիւնից շատ անտեղեակ լինել է ցոյց տալիս, երբոր ասում են թէ՛ առաջուայ դարերում մարդիկ վարքով ու բարքով աւելի պարզ էին. աւելի մաքուր և աւելի աստուածավախ, քան թէ մեր օրերումը: Բաց արէ՛ք այդ դոված, փառաբանած հարիւրաւոր տարիների ժամանակագրութիւններն ու դատաստանական արձանագրութիւններն, ու դուք նոյն յանցանքները, նոյն վատ գործերը կ'տեսնէ՛ք, որոնց մէջ այսօր սաստիկ մեղադրում ենք մեր ժամանակի մարդոց, շատ ցաւելով ու ախրեւով, որ շատ վատացել են: Մարդս իւր բարի ու չար հակում-

ներքի մէջ միշտ նոյնն է մնում, միայն նրան շրջապատող հան-
 գամանքներն են փոխւում, հետն էլ առաջ ու մեր օրերումն
 եղած ստորութիւնների, վարք ու կարգի վերայ ինչպէս մտիկ
 տալը, լաւ կամ վատ համարելը: Թագաւորութիւնների ու ազ-
 գերի հանգամանաց մէջ յառաջ եկած մեծ յեղափոխութիւն-
 ները, մոքի լուսաւորութիւնն աւելանալն ընդհանրապէս,
 մարդոց գիտեցած ու կարողացած բաների մէջ յառաջագիմու-
 թիւնն՝ մեր օրերի մէջ իբրեւ հետեւանք յառաջ է բերել մի նոր
 ժամանակ, որոյ մէջ քրիստոնէութեան քանի ու քանի բարո-
 յական ճշմարտութիւններն աւելի պարզ են հասկացուել և
 շատ ու շատ տեղ ճշանակութիւն ու կշիռ ստացել, քան թէ
 անց կացած դարերի մէջ ունէին: Համարձակ յայտնուում ու
 քարոզուում է՝ մարդոց հաւասար իրաւունք ունենալը, մի-
 չեւ անգամ ամենայնոքին մարդու գերութիւնն ամեն տեղ
 վերացւում է: Բարեօրոյթութիւնն՝ անց կացած դարերի պատ-
 մութեան ոչ մի շրջանի մէջ դեռ չտեսնուած գործեր է կա-
 տարում իւր խելացի և մեծահոգի գործունէութիւնովն: Ասա-
 ծիս վկայ են անթիւ անհամար ընկերութիւններն ու հաս-
 տատութիւններն, որոնց նպատակն է տառապեալ աղքատ-
 ների, անտէր, անտիրական որբերի և այրիների քաշած նեղու-
 թիւնները մեղմացնել, ունեցած ծանր փիճակը թեթեւացնել,
 Ո'րտեղ էլ որ մի մեծ անբաղդութիւն պատահի, ամենահեռա-
 ւոր տեղեր, մտիկ չտալով թէ ինչ ազգիցն են՝ օգնութիւն են
 ղրկում, որ բնակիչների թշուառ դրութեանը հասած ու նը-
 րանց միջխորած լինին: Եւ որչափ մեծ են ընդհանրապէս
 ջանքն ու աշխատութիւնն, որպէս և զոհաբերութիւններն,
 որ աւելի լաւ կարգի ու կանոնի մէջ լինին աղայոց և աղջկանց
 ուսումնարաններն, և մի և նոյն ժամանակ ազգի մէջ էլ լու-
 սաւորութիւնը տարածուի: Այս ամենն՝ որ յիշեցի, անշուշտ
 քրիստոնէական հոգւոյ լուսաւոր և պայծառ ճառագայթներն
 են մեր դարու մէջ: Եթէ որ, այո՛, ամենեւին ուրանալ չենք կա-
 րող ժամանակիս քրիստոնէական հոգւոյ ու լուսաւորութեան
 պակասաւոր ու մութ կողմերն էլ, բայց կարող ենք համարձակ
 ցոյց տալ մեր օրերի գերազանցութիւններն էլ՝ ու դրա համար

Աստուծոյ փառք տալ:

Ուրեմն, անորդար չլինինք մեր աւելի գովելովն ու սիրելովը հինն, իբրեւ աւելի լաւ, ու նորը պարսաւել, իբրեւ անհամեմատ կերպով աւելի վատ ու վատացած: Եթէ որ մահկանացու մարդիկ, ինչպէս որ կարծու՞մ են, միշտ մոլութիւնների մէջ առաջ գնացած լինէին, անկարելի բան պիտի համարուէր, որ բարին միշտ հակակշիռը կարողանայ լինել չար բանիւ, ճշմարիտն եմ ասու՞մ, այս աշխարհս վաղճաց տրդէն անմարդաբնակ անապատ դարձած կ'լինէր ու մի մեծ փոսի նման, որոյ մէջը սպանուած մարդիկ քցած լինէին. մեր տաճարները հողի կոյտ կ'լինէին. թագաւորութիւնները քայքայուած. էլ ոչ օրէնք կ'լինէր, ոչ կարգ, ոչ հաւատարմութիւն, ոչ սէր, ոչ հանգիստ և ոչ ապահով կեանք:

Ժամանակներն՝ ինչպէս էլ լինին, եթէ շատ պղտոր էլ լինին՝ քրիստոնեան երբէք իւր սիրտը պէտք չէ կոտրի, յուսահատուի: Որքան էլ որ ժամանակը վատ լինի, այնքան աւելի մարդս ինքը պիտի լաւ լինի: Սորա համար Պօղոս առաքեալն ասում է մեզ, ինչպէս որ մի ժամանակ՝ գրեթէ հազար ութն հարիւր տարի առաջ ասում էր Եփեսացի քրիստոնեաներին. «այժմ հոգիս պիտի լինի ինչպէս զգուշութիւնով պիտի ապրեմ, ու ինչպէս որ ժամանակը լաւ է»:

Իմաստունի իսկական նշանն, որով ճանաչուում է՝ վատ ժամանակումը զգուշութեամբ ապրելու և կենցաղավարութեամբ ապրելու է, ուղղում եմ ասել թէ՛ իւր կեանքն այնպիսի կարգ ու կանոնի մէջ պահել, որ ժամանակի չարիքն՝ իրան չճնշի, նորա մոլութիւններին չհետևի, նորա վտանգներից ազատ մնայ:

Սորա համար, ժամանակի հանգամանքներն որքան որ աւելի վատ լինին, այնչափ դու աւելի վսեմ սիրտ սնեցիր, ով քրիստոնեայ, որ նրանց առաջը դուրս գաս խելքով ու սրտով: Ով որ նեղ գրութեան մէջ իւր հաւատը կորցնում է՝ ու սրտովը թուլանում, նա արդէն կորած է, ու չի կարող պատահած ձախորդութեան իւր բոլոր ոյժովը դէմ դնել. ինչու որ երկիւղիցն իւր մէջը սիրտ չի մնալ: Հոգսերդ Փրկչիդ վրայ քցի, անդրդ-

ուելի հաւատով հաւատաւ նորան: Նա է քո վէմդ, քո ապա-
ւէնդ, քո պաշտպանդ, քո վահանդ: Ո՛չ քո հաւատովդ և ոչ
գործովդ նրան մի թողնիլ, նրանից մի հեռանար, նա էլ քեզ
չի թողնիլ, քեզանից հեռու չի լինիլ: Եւ եթէ որ Աստուած
մեզ հետ է, ո՞վ կարող է մեզ հակառակ լինիլ:

Ինչո՞ւ եղ յի կ'ընչիւ. եթէ որ սկսեցիր տարակուսիլ ու շուա-
րած մնալ, ոչ իմաստունին հարկաւոր զգուշութիւնը կունե-
նաս, ոչ էլ հանգիստ որոտով մտածել կկարողանաս: Թէ՛ ինչպէս
անես, որ այս, այն չարիքը փոքրանայ և ոչ թէ քո աչքումդ
մեծանայ: Սորա համար քեզ պահիր զուր տեղը գանգատուե-
լուց թէ՛ ժամանակները վատացել են: Այդպիսի գանգատները
սիրագ կկտարեն, քեզ կթուլացնեն, ուրիշներին էլ կշուարեց-
նեն ու կընկճեն: Աւելի լաւ կանես, որ ինքդ քեզ սիրտ տաս,
ուրիշներին էլ սիրտ տա խօսքովդ և օրինակովդ, որ քեզ նը-
ման սրտի քաջութիւն ունենան. ցոյց տուր հոգւոյդ մեծու-
թիւնն, ամենաւատ հանգամանքների մէջ, և այսպէսով կբարձ-
րացնես նրանց էլ, որոնք որ փոքրոգութիւնից կարող էին յու-
սահատուիլ: Աշխարհիս վրայ չկայ չարիք, որ սրտի քաջու-
թիւնը չկարողանայ յաղթել:

Սէր՝ առ: Մի մոռանալ, որ Աստուած ինքն գիտէ ժամա-
նակիս մէջ մարդու գլխին գալու բաները. նոյնպէս մի մո-
ռանալ, որ նա է Տէրն, որին բոլոր աշխարհս հնազանդում է
ու Որին ձեռքն է թագաւորների սիրտը. մի մոռանալ, որ ժա-
մանակիս չարիքն էլ նրա համաշխարհական կառավարութեան
ծրագրի մէջը կայ. և թէ իւր սուրբ և անսուտ խօսքը մեզ
յայտնել է— թէ ամենայն բան նրանց համար ի բարին է, որոնք
իրան սիրում են: Երբոր կտեսնես, որ դժուար է քեզ համար
միշտ հոգս անելով ու աշխատելով քո օրական ապրուստդ
ձեռք բերելն, որ ընտանիքդ պատշաճաւոր կերպով պահել կա-
րողանաս, այն նեղ տեղն ընկած օրերումդ՝ ժամանակի ստիպո-
ղական հարկի ու պահանջի առաջը դուրս եկ քրիստոնէի ըզ-
գուշութիւնով: Սորվիր առանց այս, այն բանն անելու կառա-
վարուիլ, ու դու հարուստ կլինիս. սորվիր քիչով բաւականա-
նալ, ու կտեսնես, որ քեզ հարկաւոր եղածից շատ աւելին ու-

նիս. սուրվիր աշխատանքդ խնայողութեամբ ու տնտեսաբար գործ դնել. քեզ և քո ընտանիքիդ համար ոչ մի ժամանակ մի պակաս բան չի լինիլ տանդ, որ քեզ նեղութիւն քաշել ու հոգս անել տայ. Գո ունեցածիցդ՝ անբաղդութեան մէջ գլուխդ քեզ նման մարդոց էլ դեռ բաժին հանել կկարողանաս:

Քրիստոնէի ղգուշութեամբ վարուիր. քաջ սրտով բեր այն զոհն, որ պէտք է բերես, առանց այն էլ կառավարուիր, երբոր պէտք է առանց այս, այն բանին կառավարուես. իւր և ուրիշի պատիւը ճանաչող մարդու նման՝ անխարդախ կիրպով վարուիր քաղաքակիցներիդ ու իշխանութեան հետ. նեղութիւն քաշիր, ցաւիր, զրկանք կրիր՝ ու համբերութեամբ տար քեզ պատահածը. բայց կատարիր քո պարտականութիւններդ. հացածը խոլ Առբաւած Կոնստանտին, Նորան և իւր իմաստութեանը թող թէ ինչ դարձուած ու փոփոխութիւն կկամենայ տալ այն բանին, ինչ որ քո գլխիդ պէտք է գայ. Նա գիտէ ամեն բանին աւելի բարերար ուղղութիւն տալ, քան թէ մահկանացու մարդու սահմանաւոր խելքը կարող է գուշակել: Սիրտդ դող չընկնի այս ժամանակներիս մէջ քո բարեկամներիդ ունենալու վիճակի համար, դեռ ևս չկրթուած քո զաւակներիդ ապագայի համար: Աստուած, որ քո Հայրդ է՝ նրանց Հայրն էլ է, և երբ որ մի օր դու այս աշխարհումն էլ չես լինիլ, ու նրանց համար հոգս քաշել էլ չես կարողանալ, Նա միշտ կենդանի է ու կենդանի կմնայ, Նա հոգս կքաշի քեզանից յետոյ էլ:

Ժամանակի հետ գնացէք, ասում է Պօղոս առաքեալը՝ ինչու որ ժամանակը չափ է. — Ինչպէս որ առաքելոյ օրերումն էր, այժմ մեր օրերումն էլ ամօթալի վարքի օրինակը սաստիկ ոյժով կոճում է ծաղր եղած առաքինութիւնների հետ. ինչպէս այն ժամանակն էր, նոյնպէս էլ այժմ դեռ ևս յաղթանակ է կանգնում շատ անգամ գոռոզ բռնութիւնը սուրբ իրաւունքի վրայ, խորամանկ չարութիւնն՝ անպաշտպան անմեղութեան վրայ, նենգաւոր չարամտութիւնն՝ ազնուասիրտ իրաւասէրի վրայ: Ինչպէս այն ժամանակ, այդպէս էլ այսօր բազմութիւն ամբօրը դեռ ծուկն է դնում այս աշխարհքի կուռքերի առաջ, ժամանակի հետ գնացէք: Բայց սրանով չեմ ուղում

առել, որ՝ ազէտ ժողովրդի բազմութեան նման՝ նրանց արածը անենք, կամ՝ նրանց նման՝ բաղդաւոր չարագործ պատուենք ու անարգութեամբ առաքինութիւնն արհամարհենք. այլ երբ որ տեսնու՞մ ես, որ վարքի ապականութիւնը քանի գնում է՝ զօրանում է և աւելանում քո հայրենիքի ու քո ժողովրդի մէջ—գնա՛, միացիր բարի մարդոց հետ, ու նորա վատ հետեւանքներին դէմ դիր արիասրտութեամբ: Այսպիսով դու կընուազեցնես քո ժամանակիդ չարիքն: Երբոր տեսնում ես, որ աստուածապաշտութիւնը պակասում է, կրօն արհամարհելն աւելանում ու զօրանում, քո օրինակովդ ցոյց տուր քո ժողովրդի մէջ եղած բոլոր բարի մարդոց հետ, որ ոչ մի առաքինութիւն չէ կարող դոյութիւն ունենալ ու լինել առանց հաւատալու Աստուծոյ և առանց այքի առաջ ունենալու յաւիտենական կեանքն ու հատուցանող երկնաւոր մեր Տիրոջն, որ իւր սուրբ տաճարի մէջ է բազմած: Քո օրինակովը որտանց մեծարանք ցոյց տուր հրապարակական աստուածապաշտութեան, ամեն բանից առաջ և ինքդ ամենից առաջ նուիրիր քո զաւակներիդ Յիսուսի կրօնի երջանկացնող ճշմարտութիւններին. քո մարդասիրութիւնովդ ու պատրաստական ճառայութիւնովդ, որպէս և օգնութիւն անելովդ, որտեղ որ պէտք է, քո քաջ սրտովդ մեծ նեղութիւնների ու անբաղդութիւնների մէջ, քո ազնուամտութիւնովդ՝ վերին աստիճանի բաղդաւորութեան հասած միջոցիդ, քո խոհեմութիւնովդ բոլոր արած գործերիդ մէջ՝ անհերքելի կերպով ցոյց տուր, թէ ինչ զօրութիւն, ինչ երջանկութիւն և իմաստութիւն պարգեւող ոյժ ունի Յիսուսի կրօնն: Այսպէս պիտի վարուի քրիստոնեան ժամանակների վերաբերմամբ: Ժամանակները կարող են փոխուել, բայց իւր սիրտը միշտ մնում է նոյնն—և իւր վրայ էլ անփոփոխ է մնում Ամենաբարձրելոյ սէրն ու ողորմութիւնը: Մարդս է անբաղդ ժամանակներ պիղծում, ու ինչ ժամանակը հարցաց անբաղդացնում:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.